



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ուրբաթ, 27 Մարտի յետմիջօրէին, Ազգ. Առաջնորդարանին մէջ ընդունեց Հայ Դատ Յանձնախումբի ներկայացուցիչներ Տիկին Այտա Տիմիճեանն ու Տիար Լեւոն Պարոնեանը:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց Հայ Դատի գործիչները եւ բարձր գնահատեց մեր ժողովուրդի իրաւունքներու հետապնդման համար նուիրեալ աշխատանքը: Խորհրդակցութիւնները ընդգրկեցին անմիջական ապագայի եւ ընդհանուր աշխատանքներ. Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչները Առաջնորդ Սրբազանը հաղորդ պահեցին այն աշխատանքներուն, որոնք յառաջ կը տարուին Զալիֆորնիոյ պետական շրջանակներուն ուղղութեամբ, յառաջիկայ Ապրիլ 24ի առիթով Զալիֆորնիոյ խորհրդարանի յատուկ նիստին համար: Ծանօթ է որ Զալիֆորնիոյ խորհրդարանի գոյգ տունները ամէն տարի, Ապրիլ 24ին յատուկ յիշատակութեան կ'արժանացնեն Հայկական Տեղասպանութիւնը եւ կ'ոգեկոչեն նահատակներուն յիշատակը:

Սիրալիր մթնոլորտի մէջ տեղի ունեցած հանդիպումին, խորհրդակցութիւնները ընդգրկեցին նաեւ Միացեալ Նահանգներու պետական շրջանակներուն հետ գործակցութեան ու մեր իրաւունքներու հաստատման միջոցները: Այս ծիրին մէջ, վեր առնուեցաւ Յանձնախումբին եւ Ազգ. Առաջնորդարանին միջեւ գործակցութեան անելի եւս սերտացման անհրաժեշտութիւնը:

PRELATE MEETS WITH ANC REPRESENTATIVES

On Friday, March 27th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed representatives from the Armenian National Committee Western Region Mrs. Aida Dimejian and Mr. Levon Baronian.

The representatives had come to convey information about the recent and upcoming endeavors of the ANC, including cooperative efforts with California state officials such as the special session the California State Legislature convenes each April in commemoration of the Genocide.

The meeting continued in a cordial atmosphere with the Prelate and guests discussing the ANC's efforts at the federal level to advance our cause, for which emphasis was put on further collaboration between the Prelacy and the ANC.